ԵԴ1/4992/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հունիսի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունիսի 4-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի դեկտեմբերի 30-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Մարիանա Ստյոպայի

Ավագյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 16825925 (ԵԴ1/4992/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Ռ.Մարիկյան) 2026 թվականի հունվարի 9-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի մայիսի 25-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Գ.Մանուկյան) 2026 թվականի հունիսի 4-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 9-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Մարիանա Ավագյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու և պահելու թույլտվություն, առանց իրացնելու նպատակի, անձնական օգտագործման համար 2025 թվականի սեպտեմբերի 11-ին 70.000 ՀՀ դրամ գումարի դիմաց Վ.Վ.Հ.-ից՝ ապօրինի ձեռք է բերել և ապօրինի պահել՝ ապիրատ գույնի փայլաթիթեղի*

*հատվածով փաթեթավորված խոշոր չափերով՝ 0,599 գրամ «Մեթամֆետամին» պեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել և վերցվել է 2025 թվականի սեպտեմբերի 13-ին Ն.Ա.Մ.-ի կողմից շահագործվող «**** *******» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ, ինչպես նաև քննությամբ չպարզված հանգամանքներում և ժամանակահատվածում, առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել և ապօրինի պահել՝ «պեպրահիդրոկաննաբինոլ» և «մեթամֆետամին» պեսակի թմրամիջոցի հեպքերով զիպ փականով պոլիէթիլենային թափանցիկ փաթեթ, «մեթամֆետամին» պեսակի թմրամիջոցի հեպքերով ապակե կոլբայաձև հարմարանք, «մեթամֆետամին» պեսակի թմրամիջոցի հեպքերով ապակե փարա, «պեպրահիդրոկաննաբինոլ» պեսակի թմրամիջոցի հեպքերով «AMSTERDAM» գրառումներով, պերևի պարկերով, մանուշակագույն երանգի, պիպուրակաձև բացվող հատվածներով, աղացանման սարք, որոնք 2025 թվականի սեպտեմբերի 13-ին հայտնաբերվել և վերցվել են Մարիանա Ավագյանի բնակության՝ ******** *****, ******* *******, ****** **********, ************** ******* **, հասցեում կատարված խուզարկությամբ, ինչպես նաև «մեթամֆետամին» պեսակի թմրամիջոցի հեպքերով զիպ փականով պալիէթիլենային թափանցիկ փաթեթ, որը հայտնաբերվել և վերցվել է 11.09.2025 թվականին Մ.Ավագյանի անձնական խուզարկությամբ: (…)»*[1]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի մայիսի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը, փաստում է, որ Մարիանա Ավագյանին մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին: Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ 2025 թվականի սեպտեմբերի 13-ին Մարիանա Ավագյանի փաստացի բնակության վայրում՝ ******** *****, ******* *******, ****** **********, ************** ******* ** հասցեում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել են «պեպրահիդրոկաննաբինոլ» և «մեթամֆետամին» պեսակի թմրամիջոցի հեպքերով զիպ փականով պոլիէթիլենային թափանցիկ փաթեթ, «մեթամֆետամին» պեսակի թմրամիջոցի հեպքերով ապակե կոլբայաձև հարմարանք, «մեթամֆետամին» պեսակի*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 82-83:

թմրամիջոցի հետքերով ապակե փարա, «փեյրահիդրոկաննաբինոլ» փեսակի թմրամիջոցի հետքերով «AMSTERDAM» գրառումներով, փերևի պատկերով, մանուշակագույն երանգի, պտուտակաձև բացվող հատվածներով, աղացանման սարք: Հետևաբար, Մարիանա Ավագյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցագործությունն ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 13-ին՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, որը «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Արմավիրի մարզի տարածքում է (նշված օրենքով որպես բացառություն Երևանի տարածք նշված՝ «Զվարթնոց» օդանավակայանը Երևան քաղաքին կապող ճանապարհի երթևեկելի մասում և դրա ճամփեզրերին չի կատարվել), որը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքն է:

Դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական գործի դատական տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Հետևաբար՝ թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Մարիանա Սրյոպայի Ավագյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ ընդդատության պետք է փոխանցել ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[2]:

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունիսի 4-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Նախ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Մարիանա Ավագյանին մեղսագրված է մեկ հանցավոր արարքի կատարում, մասնավորապես՝ Մարիանա Ավագյանին մեղսագրվում է 0,599 գրամ «Մեթամֆետամին» փեսակի թմրամիջոց պահելը, որը հայտնաբերվել և վերցվել է 2025 թվականի սեպտեմբերի 13-ին Ն.Ա.Մ.-ի կողմից շահագործվող «**** *******» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ: Թեև Մարիանա Ավագյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նկարագրված է իր բնակության վայրում՝ ******** *****, ******* *******, ****** **********, ********** ******* ** հասցեում «փեյրահիդրոկաննաբինոլ» և «մեթամֆետամին» փեսակի*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 19-23:

թմրամիջոցի հետքերով զիպ փականով պոլիէթիլենային թափանցիկ փաթեթ, «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի հետքերով ապակե կոլբայաձև հարմարանք, «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի հետքերով ապակե փարա, «փետրահիդրոկաննաբինոլ» տեսակի թմրամիջոցի հետքերով «AMSTERDAM» գրառումներով փերևի պատկերով մանուշակագույն երանգի պտուտակաձև բացվող հատվածներով աղացանման սարք ապօրինի ձեռք բերելը և պահելը, ինչպես նաև իր մոտ «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի հետքերով զիպ փականով պալիէթիլենային թափանցիկ փաթեթ ձեռք բերելը և պահելը, սակայն նշված գործողությունները առանձին քրեաիրավական գնահատական չեն ստացել, հետևաբար նկարագրված գործողություններից որևէ մեկը չի կարող մեկնաբանվել որպես մեղսագրվող վերջին հանցանք:

Ուսրի Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշման մեջ նշված այն դատողությանը, որ Մարիանա Ավագյանին մեղսագրվող արարքներից վերջինը կատարվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

*Սույն դեպքում, Դատարանի գնահատմամբ խոսքը գնում է մեղսագրված մեկ արարքի ավարտման պահի մասին, քանի որ Մարիանա Ավագյանին մեղսագրվել է տվող հանցանքի կատարում, ինչը ենթադրում է, որ այն ավարտվել է նկարագրված գործողություններից վերջինի իսափանման պահին: Տվյալ դեպքում ինչպես Մարիանա Ավագյանի բնակարանում, այնպես էլ Ն.Ա.Մ.-ի կողմից շահագործվող «**** *******» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայում իուզարկությունները կատարվել են նույն օրը՝ 2025 թվականի սեպտեմբերի 13-ին, այսինքն՝ արարքը իսափանվել է նշված օրը, իսկ մեղադրական եզրակացության, ինչպես նաև Մարիանա Ավագյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ առկա փաստական տվյալները հնարավորություն չեն տալիս հստակ հետևություններ կատարել առ այն, որ նշված իուզարկություններից հենց Մարիանա Ավագյանի բնակարանում կատարված իուզարկությունն է եղել վերջինը:*

*Դրան հակառակ, մեղադրական եզրակացության ուսումնասիրությունը թույլ է տալիս միանշանակորեն պնդել, որ «**** *******» մակնիշի ** ** *** հաշվառման*

համարանիշի ավտոմեքենան, որի խուզարկությամբ հայտնաբերված թմրամիջոցը պահելը մեղսագրվել է Մարիանա Ավագյանին, վերջինիս ձերբակալումից հետո տեղափոխվել և պահվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը համարվող, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մալաթիայի բաժնի հատուկ պահպանվող տարածքում:

Դատարանի գնահատմամբ տարածքային ընդդատության հարցի քննարկման տեսանկյունից առավել էական հանգամանքը հենց Մարիանա Ավագյանին մեղսագրված թմրամիջոցի հայտնաբերման փաստն է: Թեև քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նկարագրված են թմրամիջոցների հետքեր պարունակող տարատեսակ առարկաների հայտնաբերման հանգամանքներ, սակայն Դատարանի գնահատմամբ այդ հանգամանքներն էական նշանակություն չունեն, դրանք ընդամենը իրենցից ներկայացնում են դեպքի հանգամանքների նկարագրություն, մինչդեռ բուն թմրամիջոցը, այսինքն՝ մեղսագրվող հանցագործության առարկան, այն է՝ 0,599 գրամ քաշով «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը, ամբողջությամբ հայտնաբերվել է վերը նշված ավտոմեքենայի խուզարկությամբ, իսկ ինչպես արդեն նշվեց, խուզարկությունն իրականացվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մալաթիայի բաժնի հատուկ պահպանվող տարածքում՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, հետևաբար Մարիանա Ավագյանին մեղսագրվող արարքը ավարտվել է այդ թմրամիջոցի, այլ ոչ թե թմրամիջոցի հետքեր պարունակող այլ առարկաների հայտնաբերմամբ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը չի ունեցել քրեական վարույթն ըստ ընդդատության փոխելու փաստական և իրավական հիմքեր, ուստի նշված քրեական վարույթի քննությունը պետք է իրականացվեր հիշյալ դատարանում: (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 63-70:

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

(…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը նույն ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Մ.Ավագյանին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքն ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 13-ին, Արմավիրի մարզի Փարաքար համայնքի տարածքում գտնվող՝ մեղադրյալի փաստացի բնակության

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

վայրի խուզարկության արդյունքում թմրանյութի հետքեր պարունակող առարկաների հայտնաբերմամբ, գտել է որ սույն վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[7]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Մ.Ավագյանին մեղսագրվում է մեկ ենթադրյալ հանցավոր արարքի կատարում, այն է՝ 0,599 գրամ քաշով «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի ապօրինի ձեռք բերում և պահում, ինչպես նաև այն, որ վերոնշյալ թմրամիջոցը 2025 թվականի սեպտեմբերի 13-ին հայտնաբերվել է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնի հատուկ պահպանվող տարածքում գտնվող ավտոմեքենայի խուզարկության արդյունքում, գտել է, որ սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Մ.Ավագյանին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքը՝ որպես տևող հանցանք, ավարտվել է 2025 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մալաթիայի բաժնի հատուկ պահպանվող տարածքում «**** *******» մակնիշի ավտոմեքենայի խուզարկության արդյունքում «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի հայտնաբերմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ վարույթի նյութերի՝ նշված խուզարկությունը **ժամանակագրական առումով հաջորդել է** Մ.Ավագյանի փաստացի բնակության վայրում՝ ******** *****, ******* *******, ****** **********, ********** ******* ** հասցեում կատարված խուզարկությանը[9]: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Մ.Ավագյանին վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տևող ենթադրյալ հանցանքն ավարտվել

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 56-58, 65-67:

է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մարիանա Ստյոպայի Ավագյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ1/4992/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ